


1875—1890



ՏՈՒՐԵՒԱՌԻ անգղիական հրապարակներու հետ այս շփումները՝ խոհեմներու միջոցով ոսն առ ոսն եւ խիզախներու ձեռներէցութեամբ ոստոստուն քայլերով ներգործած էին Թուրքիայի՝ մանաւանդ Կ. Պոլիսի եւ Ջմիւռնայի՝ հրապարակներուն վրայ, ուր և քառորդ դարէ հետէ կը բանէին քսան եւ հինգ կանոնաւոր մեծ տուներ մանիֆաթուրայի գործերու վրայ: Թէպէտ էապէս տեսակները կը տեւէին հին ճաշակի և գիտութեանց վրայ, բայց գործառնութիւնք և հաշուընթացութիւնք քիչ շատ կանոնաւորուած էին ու եւրոպականացած անգամ ուրեք ուրեք, որով աւելի մէթոտեալ ձեւերով սկսաւ ու փակուեցաւ 1870էն 1890 մանիֆաթուրայի ոսկեդարին վերջին շրջանն ի Թուրքիա, որ մեր տեսութեանց ալ վերջին մասը պիտի ըլլայ:

Այս կազմաւորեալ անցումի միջոցին՝ մանաւանդ պասմայի բանաստեղծական ճիւղը սկսաւ թօթափել նկարներու և տարազներու հին միօրինակութիւններն ու Եւրոպական գործառնութիւնները: Շէնք շնորհք վաճառատուններ վարձած էին, կանոնաւոր տոմարակալներու քով, պասմայի գեղագէտ նկարիչներ ալ, որ արեւելեան ընթացիկ երազուն ձեւերը կը ճահանկարէին եւրոպական տուեալ գծագիտութեանց և ներկագործու-